ԵՐԵՎԱՆԻ ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ 100-ԱՄՅԱ ՈԴԻՍԱԿԱՆԸ

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
արվեստագիտության թեկնածու
դասախոս ՀԳՊԱ,
Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվ. գեղարվեստի պետական քոլեջ

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է արդեն մեկ դարյա պատմություն կերտած և հայկական կերպարվեստի կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Փանոս Թերլեմեզյանի անունը պատվով կրող կրթօջախի պատմությանը, որը հարյուր երկար ու ձիգ տարիների ընթացքում անցել է դժվարին ու բեղմնավոր ուղի: Տարիների ընթացքում այս հաստատությունում փոփոխվել են արվեստագետների սերունդներ, աշակերտել ու դասավանդել են անձինք, որոնց անուններն իրենց հաստատուն տեղն են գրավել Հայաստանի գեղարվեստական կյանքում: 100-ամյա տարելիցի կապակցությամբ հետաքրքրական է հետահայաց դիտարկել կրթօջախի ձևավորման ու հաստատման պատմության ուշագրավ դրվագները:

Առանցքային բառեր. *Երևան, գեղարվեստի քոլեջ, Փանոս Թերլեմեզյան, տարեդարձ, հոբելյան:*

Դեռևս 1919 թվականին էր որոշում կայացվել գեղարվեստի ուսումնական հաստատություն ունենալու հարցը, որն իրականացավ երկու տարի անց միայն՝ 1921 թվականին, Լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի պաշտոնավարման օրոք[1]: Ուսումնարանը ժամանակին կոչվում էր «Գեղարվեստա-արդյունաբերական պոլիտեխնիկում» կամ «Գեղարդ» տեխնիկում: Գեղարվեստական կրթության այս օջախը հիմնադրվել է աշնանը, բայց պարապմունքները կանոնավոր կերպով սկսվել են միայն 1922 թվականի փետրվարի 1-ից[2]:

Դպրոցը հիմնվել է չափազանց ծանր նյութական պայմաններում, բայցևայնպես հաջողվել է, հաղթահարելով բոլոր խոչընդոտները, դպրոցը դնել լավ հիմքերի վրա: ՌՍՖՍՀ Լուսժողկոմի կերպարվեստի բաժնի կողմից 1921 թ. հուլիսի 5-ին որոշվել էր գեղանկարիչ Հովհաննես Տեր-Թադևոսյանին գործուղել Երևան՝ հրահանգավորելու առաջին պետական

---

[1] **Կիրակոսյան Մ.**, «Էջեր Փանոս Թերլեմեզյանի անվան ուսումնարանի պատմությունից», Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երրորդ նստաշրջանի նյութեր, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, Երևան, 2008, էջ 86:

[2] **Ավագյան Վ.**, «Գեղարվեստական-տեխնիկական դպրոց», Խորհրդային Հայաստան, Երևան, 1925, թիվ 272, էջ 10:

ուսումնա-արտադրական դպրոցի կազմակերպման հարցերը: Քչերին է հայտնի, որ Հայաստանում գեղարվեստական կրթության զարգացման առաջին քայլերը կատարվել են Ուզբեկստանի ժողովրդական նկարիչ, հայազգի Հովհաննես Տեր-Թադևոսյանի կողմից[3]: Նա է նշանակվել գեղարվեստա-արդյունաբերական դպրոցի առաջին տնօրեն, որից հետո այդ պաշտոնը ստանձնել են գեղանկարիչ Ս. Աղաջանյանն ու քանդակագործ Վ. Մելիք-Հակոբյանը[4]: Կրթօջախի հիմնական ու գլխավոր նպատակը մշտապես եղել է գեղարվեստա-արտադրական տարբեր ճյուղերի բնագավառում որակյալ մասնագետների պատրաստումը: «Խորհրդային Հայաստան» թերթում Գաբրիել Գյուրջյանի հրապարակումից տեղեկանում ենք նաև, որ այդ տարիներին ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի նախագահությամբ հատուկ հանձնաժողովի կողմից ծրագրեր էին մշակվում ուսումնարանում կրթական բարեփոխումների և վերակազմության համար[5]: Այդ ծրագրով նախատեսվում էր կրթօջախում ստեղծել եռաստիճան ուսումնական համակարգ. ստորին, միջին և բարձր: Գ. Գյուրջյանի 1924 թվականի հրապարակումից տեղեկանում ենք նաև, որ ուսումնարանն այդ տարվա դրությամբ ունեցել է ընդամենը 6 նկարիչ և 2 քանդակագործ դասախոս և 5 վարպետ: 1924-25 թ.թ. ուսումնական տարում կրթօջախն ունեցել է արդեն հինգ հիմնական նկարչական արհեստանոց և երեք քանդակագործական արվեստանոց: Դպրոցին կից գործել են նաև չորս արհեստանոցներ՝ ոսկերչանոց, բրուտանոց, ձեռագործարան և ասեղնագործարան: Այդ տարիներին պարապմունքներն իրականացրել են խմբակային համակարգով: Ավելացվել են նաև «զարդանկարչություն», «պլաստիկական անատոմիա», «հեռանկարչություն», «երկրաչափական գծագրություն», «արվեստի տեսություն» և «կոմպոզիցիա» առարկաները:

Ուշագրավ է այդ տարիներին նորաստեղծ կրթօջախի դասախոսական կազմը համալրած հայ կերպարվեստի աստղաբույլը: 1924-1925 թ.թ. ուսումնական տարում գեղանկարիչ Սեդրակ Առաքելյանը, որ վարիչի պաշտոնակատարն էր, որոշ ժամանակ անց հրաժարվել է պաշտոնից՝ մնալով միայն ուսուցիչ: Այդ պաշտոնում հրավիրվել է 1924 թվականին Մոսկվայից ժամանած Վահրամ Գայֆեջյանը, ով համատեղում էր վարիչի պաշտոնը՝ «արվեստի տեսություն» և «կոմպոզիցիա» դասավանդելով: Ուշագրավ է, որ Արա Սարգսյանը «քանդակագործություն» էր դասավանդում, Տարագրոսը «ոճավորում» և «հայ արվեստի պատմություն», իսկ ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանը՝ «հեռանկարչություն» և «գծագրություն»[6]: Ուսումնարանի շենքը գտնվում էր Երևանի սրտում, Կոնդ թաղամասում, բարձունքից ներքև, շրջապատված պտղատու այգիներով,

---

[3] **Հովհաննես Տեր-Թադևոսյան:** 1889-1974, ՀԱՊ, Երևան, 2010, էջ 9:

[4] **Կիրակոսյան Մ.**, «Էջեր...»:

[5] **Գյուրջյան Գ.**, «Պետական գեղարվեստական տեխնիկական դպրոցը», Խորհրդային Հայաստան, 1924, թիվ 119, էջ 4:

[6] **Կիրակոսյան Մ.,** «Էջեր...», էջ 89:

իսկ պատշգամբից բացվում էր հին Երևանի ողջ համայնապատկերը՝ իր եկեղեցիներով, մզկիթներով, կավե տափարակ կտուրներով: Պատշգամբի առաջ ընդարձակ ծիրանի այգի էր, որը գարնանը ծաղկելիս անուշ բուրմունք էր տարածում: Պատշգամբում մշտապես թեյ էր վայելում Սեդրակ Առաքելյանը: Այդ պատշգամբից բացվող հրաշալի տեսարանը՝ վեհապանծ Սիս ու Մասիսով, բազմիցս է ներկայացվել ուսումնարանի տարբեր տարիների նկարիչ ուսանողների և դասախոսների կտավներում: Այդ տեսարանով ժամանակին հիացել է անգամ Մարտիրոս Սարյանը, երբ 1923 թվականի հունիսին ներկա էր գտնվել ուսումնարանի տարեվերջյան ցուցահանդեսին[7]: Գեղանկարիչ Էդուարդ Սարգսյանի հուշերից տեղեկանում ենք, որ ուսումնարանի մասնագիտական պարապմունքները տեղի էին ունենում երեկոյան ժամերին, իսկ առավոտյան հանրակրթական առարկաներն անցնում էին ամերիկյան քոլեջում, այնուհետև Օրիորդաց գիմնազիայում: 1923-1924 թ.թ. ուսումնական տարում եվրոպական գրականություն էր դասավանդվում ուսումնարանում արևմտահայ Սարգիս Մանուկյանի կողմից: Ուսումնարանում կազմակերպված էր անգամ գրական խմբակ, ուր յուրաքանչյուր կիրակի հավաքվում էին և երկար զրուցում գրականության մասին: «Արվեստի պատմություն» առարկան այդ ժամանակաշրջանում դասավանդում էր գրականագետ, արվեստի քննադատ Գուրգեն Վանանդեցին: Արդեն պատմություն կերտած այս կրթօջախում են դասավանդել նաև 20-րդ դարի հայ կերպարվեստի զարգացման գործում իրենց կարևոր ներդրումն ունեցած այնպիսի արվեստագետներ, ինչպիսիք են Վրթանես Ախիկյանը, Անատոլի Պապյանը, Սուրեն Սաֆարյանը, Էդուարդ Իսաբեկյանը:

Հիմնադրումից 5 տարի անց՝ դպրոցը տվել է իր անդրանիկ շրջանավարտներին՝ թվով ընդամենը 12 հոգի, որից հետո տարեցտարի շրջանավարտների թիվն ավելացել է: Առաջին շրջանավարտների թվում են եղել Մհեր Աբեղյանը, Սարգիս Բեկլարյանը, Արմիկ Չիլինգիրյանը, Վարդգես Աղաբաբյանը, Մարգարիտ Զաքարյանը, Վանանուշ Աղայանը, Հովհաննես Թորոսյանը, Տիգրան Դավթյանը, Վահագն Թերոիպաշյանը, Հռիփսիմե Գասպարյանը, Հայկ Տեր-Ավագյանը, Սեդրակ Ռաշմաճյանը, և Էդուարդ Սարգսյանը[8]: Տարիներ անց կրթօջախի ճամփան են բռնել ու իրենց մասնագիտական կայացման ուղին սկսել անվանի արվեստագետների մի ամբողջ աստղաբույլ, որոնց թվում են Մինաս Ավետիսյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Հենրիկ Սիրավյանը, Արա Բեքարյանը, Հովհաննես Զարդարյանը, Անդրանիկ Կիլիկյանը, Բաբկեն Քոլոզյանը, Գրիգոր Խանջյանը, Սարգիս Մուրադյանը, Էդուարդ Արծրունյանը, Արա Հարությունյանը, Բենիկ Պետրոսյանը, Երեմ Վարդանյանը, Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանը, Մարիամ և Երանուհի Ասլամազյանները և շատ

---

7 Տես՝ **Սարգսյան Է.**, Նկարչի հուշերը», հուշագրություն, Երևան, 2019:

8 «Երևանի գեղարվեստական-արդյունաբերական տեխնիկումի ցուցահանդեսը», Արվեստ, Երևան, 1927, թիվ 5-6, էջ 16:

ուրիշներ: Ուսումնարանում հիմնադրումից ի վեր յուրաքանչյուր տարվա վերջում անցկացվել է ուսանողական հաշվետու ցուցահանդես, որի ավանդույթը պահպանվում է առ այսօր:

Այսօր արդեն 100-ամյա տարելիցի կապակցությամբ հետաքրքրական է հետահայաց դիտարկել կրթօջախում տարիներ շարունակ աշխատած և քոլեջի կեսդարյա տարելիցի ելույթի առիթով Հայաստանի ժողովրդական նկարիչ Գաբրիել Գյուրջյանի կողմից գրված ինքնագիր տեքստը[9]: Գյուրջյանը 1922 թվականին գալով Երևան՝ մանկավարժական աշխատանքի է անցել այս հաստատությունում, որն այդ ժամանակաշրջանում երազանքն է եղել, որ «Գեղարդ» տեխնիկում է կոչվել[10]: Մեծավաստակ նկարչի երբեմնի Երևանում լինի կերպարվեստի կրթօջախ: Պետականությունից զուրկ հայ ժողովուրդը փափագել է ունենալ ուսումնական հաստատություն, ուր երիտասարդ սերունդները գեղարվեստական կրթություն կստանան հենց իրենց մայր երկրում: Գյուրջյանն իր ելույթի տեքստում հատկանշել է, որ չափազանց դժվար ու հաճախ անհնար է եղել մեկնել արտասահման՝ օրինակ Պետերբուրգ, Մոսկվա, Փարիզ, Մյունխեն կամ Հռոմ, լեզու չիմանալով և նյութական սուղ միջոցներով պայմաններ հայթայթել սովորելու համար: Շատ ու շատ ուսումնատենչ երիտասարդների համար այդ նախաձեռնությունը եղել է անհնար ու անմատչելի: Այս խնդրի կապակցությամբ Գյուրջյանը հիշատակում է տարիներ առաջ հրատարակված մի հոդվածում՝ ռուս անվանի գեղանկարիչ Իլյա Ռեպինի՝ Անդրկովկասում (Թիֆլիսում) գեղարվեստական կրթության հիմնադրման առթիվ հայտնած մտահոգությունը («Кавказ», 1897 г.): Եվ փաստորեն այդ հոդվածի հրապարակումից ընդամենը 25 տարի անց՝ 1921 թվականին արդեն պետականություն ձեռք բերած հայ ժողովուրդը իրականացրել է Երևանում առաջինգեղարվեստական հաստատության հիմնարկումը: Այսպիսով՝ Ռեպինի նախագուշակ պատգամով հենց Խորհրդային Հայաստանում ստեղծվեց ազգային մշակույթի ուրույն կրթօջախ, և այն տարիներին սա իհարկե մեծ նվաճում էր հայ ժողովրդի և հայոց պետության համար:

Դպրոցի կրթական ծրագիրը մշակել են մեծանուն արվեստագետ-մանկավարժներ, որոնք արդեն մեկ դար է սերնդեսերունդ փոխարինում են իրար: Գյուրջյանն անդրադարձել է նաև ուսումնարանի՝ Փանոս Թերլեմեզյանի անունով կոչելու իրողությանը՝ մի նկարչի, որ չի դասավանդել այդտեղ, նշելով, որ շատերը չեն հասկացել այդ որոշման խորհրդանշական իմաստը: Երևանի «Գեղարդ» ուսումնարանը հայկական հողում անդրանիկ գեղարվեստական կրթօջախն էր՝ տառապյալ հայ ազգի համար աննախադեպ հնարավորություն, իսկ Թերլեմեզյանը ժամանակի այն եզակի արվեստագետն էր, որը ծագումով լինելով արևմտյան Հայաստանից՝

---

9 **Գյուրջյան Գ.,** Ձեռագիր տեքստ, Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 1547, ցուցակ 1, գործ 39:

10 Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 1547, ցուցակ 1, գործ 95:

միաժամանակ արևելյան և Խորհրդային Հայաստանի նկարիչն էր: Ըստ Գյուրջյանի՝ նա հանդիսանում էր այն անհրաժեշտ փառավոր օղակը, որը միաձուլում էր երկպառակտված երկրի խորհրդանշական միասնությունը: Դժվար էր գտնել արվեստի մի ուրիշ գործիչ, որն անցած լիներ կյանքի ու ստեղծագործական նման այնպիսի քարքարոտ ու հերոսական ուղի, ինչպիսին Փանոս Թերլեմեզյանինն էր: Գյուրջյանը հավելում է նաև, որ չնայած Թերլեմեզյանն այս ուսումնարանում չի դասավանդել, սակայն այն մշտապես վարպետի հոգածության և ուշադրության ներքո է եղել: Թերլեմեզյանը Մարտիրոս Սարյանի, Ստեփան Աղաջանյանի, Հակոբ Կոջոյանի և այլոց պես, պարբերաբար այցելել է կրթօջախ, հետաքրքրվել ընթացիկ աշխատանքներով:

Վարպետի ուսումնարան այցերի վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել գեղանկարչուհի Հեղինե Աբրահամյանի հուշագրությունում: Նկարչուհին հիշում է, թե ինչպես 1928 թվականի գարնանը Թերլեմեզյանը այցելել էր ուսումնարանի ուսանողական ցուցահանդես[11]: Տեղեկություններ կան նաև այն մասին, որ Փանոս Թերլեմեզյանն ուսումնարանում 1929 թ.-ին նշանակվել է 1928-1929 թ.թ. ուսումնական տարվա ընթացավարների աշխատանքը ստուգող և որակավորող հանձնաժողովի անդամ: Հետագայում էլ Թերլեմեզյանը պարբերաբար այցելել է ուսումնարան, շփվել դասախոսների և սաների հետ, ներկա գտնվել ուսումնարանի ցուցահանդեսներին: Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջն այսօր էլ իր հմուտ կադրերով մշտապես կատարելագործում է հաստատությունում ընթացող մանկավարժական ու գեղարվեստական գործունեությունը՝ հայկական կերպարվեստի փառավոր աստղաբույլին պարբերաբար ավելացնելով երիտասարդ սերնդի արվեստագետների նորանոր անուններ:

100 YEARS OF YEREVAN STATE COLLEGE OF FINE ARTS AFTER PANOS TERLEMEZYAN

GAYANE POGOSYAN
PhD in Art History
Lecturer at SAFAA,
Yerevan State College of Fine Arts after Panos Terlemezyan

ABSTRACT

The article is devoted to the 100th anniversary of Yerevan State College of Fine Arts after Panos Terlemezyan, which has gone through the difficult and fruitful

[11] **Աղաբաբյան Կ.,** Նկարչուհի Հեղինե Աբրահամյանի հուշագրությունը, Երևան, 2015, էջ 21:

path for hundreds of long and hard years already. Even today, with its skilled staff college constantly improves the pedagogical and artistic activities of the institution, regularly involving young artists in the glorious constellation of Armenian art. Over the years generations of artists have changed in this college, students and teachers, whose names have had a firm place in the artistic life of Armenia. It is interesting to look back at the remarkable episodes in the history of the formation and establishment of the college.

Key words: *Yerevan, college, Panos Terlemezyan, anniversary.*

100-ЛЕТИЕ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ХУДОЖЕСТВЕННОГО КОЛЛЕДЖА ИМЕНИ ФАНОСА ТЕРЛЕМЕЗЯНА

ГАЯНЕ ПОГОСЯН
Кандидат искусствоведения
Преподаватель
Государственная академия художеств Армении
Ереванский государственный художественный колледж имени Фаноса Терлемезяна

Статья посвящена 100-летнему юбилею прошедшего долгий и плодотворный путь Ереванского государственного художественного колледжа имени известного армянского художника Фаноса Терлемезяна. С годами менялись поколения студентов и учителей, имена которых по сей день занимают достойное место в художественной жизни Армении. По случаю 100-летия интересно бросить ретроспективный взгляд на знаменательные эпизоды в истории становления колледжа.

Ключевые слова: *Ереван, колледж, Фанос Терлемезян, юбилей.*

1

2

3

Նկ. 1. Երևանի գեղարվեստական տեխնիկումի առաջին շրջանավարտները, 1927 («Էդվարդ Սարգսյան. Նկարչի հուշերը գրքից»)
Նկ. 2. Ուսումնարանի 5-րդ կուրսի ուսանողները, 1927 (ՀԱՊ, հուշաձեռագրային ֆոնդ, հ. 30850)
Նկ. 3. Ավարտական կուրսի ուսանողները դասախոսներ՝ Գ. Գյուրջյանի, Տարագրոսի, Վ. Ախիկյանի, Ս. Առաքելյանի և այլոց հետ, 1929 (ՀԱՊ, հուշաձեռագրային ֆոնդ, հ. 30850)

4

5

6

Նկ. 4. Ս. Առաքելյանն ու Վ. Գայֆեջյանը մի խումբ ուսանողների հետ, 1927 (ՀԱՊ, հուշաձեռագրային ֆոնդ, h. 30850)
Նկ. 5. Գեղարդ տեխնիկումի դասախոսական կազմը, 1927 (ՀԱՊ, հուշաձեռագրային ֆոնդ, h. 30850)
Նկ. 6. Ուսումնարանի նախկին շենքը բակի կողմից, Լեոյի փողոց (ՀԱՊ, հուշաձեռագրային ֆոնդ, h. 30850)

7

8

9

Նկ. 7. Ուսումնարանի շրջանավարտները Ա. Սարգսյանի հետ, 1945 (ՀԱՊ, հուշաձեռագրային ֆոնդ, h. 30850)
Նկ. 8. Ուսումնարանի դասախոսական կազմը Գ. Հովհաննիսյանի օրոք, 1950 (ՀԱՊ հուշաձեռագրային ֆոնդ, h. 30850)
Նկ. 9. Քոլեջի ներկայիս շենքը Արշակունյաց պողոտայում (Լուսանկարը՝ https://terlemezyan.com կայքից)